ընկերության հետ 21.10.2024թ.-ին կնքված իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման Պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գինը կազմում է 80.000 ՀՀ դրամ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի՝գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության ծախսեր են համարվում նաև փաստաբանական կազմակերպություններին վճարված կամ վճարման ենթակա գումարները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Տվյալ դեպքում, փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը /ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը/, գործի բարդությունը: Վերոնշյալ պատճառաբանությամբ, գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար է հանդիսանում 50.000 ՀՀ դրամը, ուստի այդ գումարը պետք է բռնագանձել Հայցվորից հօգուտ Պատասխանողի:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Ագաստ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 05.09.2024թ.-ին կայացված թիվ 08-038/823 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

«Ագաստ» ՍՊ ընկերությունից հօգուտ Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն ՓԲ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ փաստաբանի վարձատրության գումար:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտ

ապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am